

Խնդիր 10

Երկու ջահել , խիզախ հեծյալ , հաճախ էին գրագ գալիս , թե ով ավելի արագ կարշավի :

Եվ մեկ անգամ չէ , որ մեկը կամ մյուսը հաղթող էին դուրս գալիս : Վերջապես դա նրանց ձանձրացրեց .

- Գիտե՞ս ինչ , - ասաց Գրիգորը , - արի գրագ գանք հակառակի վրա : Թող գրագը շահի նա , ում ձին պայմանավորված տեղը կհասնի երկրորդը և ոչ թե առաջինը :

– Շատ լավ , - պատասխանեց Դավիթը :

Հեծյալներն իրենց ձիերով դուրս եկան դաշտ : Հավաքվեց հանդիսատեսների մի ամբողջ բազմություն՝ բոլորը ցանկանում էին դիտել այդ արտասովոր տեսարանը : Մի ծերունի ծափ զարկելով սկսեց հաշվել .

– Մեկ... երկու... երեք...

Իհարկե , մրցակիցները տեղից չշարժվեցին : Հանդիսատեսներն սկսեցին ծիծաղել , գցել -բռնել և որոշեցին , որ այդպիսի գրագն անիմաստ է և որ մրցակիցները տեղում կկանգնեն , ինչպես ասում են , մինչև աշխարհի վերջը : Այդ ժամանակ ամբոխին մոտեցավ աշխարհ տեսած մի ալեհեր ծերունի .

– Ի՞նչ է եղել , - հարցրեց նա :

Նրան պատմեցին :

– Էհե՛ , - ասաց ծերունին , - ես հիմա նրանց ականջին այնպիսի բան կասեմ , որ նրանք կարշավեն քամուց էլ արագ :

Եվ իրոք... Ծերունին մոտեցավ հեծյալներին , նրանց ինչ-որ բան ասաց և կես րոպե անց արդեն կոզակներն ամբողջ թափով սլանում էին դաշտով , ձգտելով անպայման անցնել իրարից , չնայած , գրագը շահեց նա , ում ձին վերջինը տեղ հասավ :

Ի՞նչ ասաց ծերունին :

Ծերունին հեծյալների ականջին շշնջաց . «Ձիերը փոխեք» : Նրանք հասկացան , ակնթարթորեն հեծան մեկը մյուսի ձին և յուրաքանչյուրը ամբողջ թափով սկսեց քշել մյուսի ձին՝ որի վրա ինքը նստած էր , որպեսզի իր սեփական ձին տեղ հասնի երկրորդը :

